British Embassy Yerevan

UNDP
Empowered lives.
Resilient nations.

oxYGen

UKaid
from the British people

Government Offices of Sweden

WOMEN IN POLITICS
ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՎԱՍԱՐ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպում

«Կանանց վերարտադրողական առողջություն» թեմայով

2019թ. հուլիսի 16-ին Երևանի Օպերա Սյութ հուրանոցում տեղի ունեցավ Ազգային Ժողով-ՔՀԿ համագործակցության հարթակի (այսուհետ Հարթակ) հերթական աշխատանքային հանդիպումը: Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների շուրջ Հարթակի քննարկումների արդյունքների ամփոփում:
2. «Կանանց վերարտադրողական առողջության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ առաջարկների ներկայացում:
3. “ՀԱՎԱՍԱՐ” քարոզարշավի ամենամյա մրցանակաբաշխություն:

Հանդիպմանը մասնակցեցին Ազգային Ժողովի (ԱԺ) պատգամավորներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնյաներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

1. **Օրակարգի առաջին հարցի շրջանակում** ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանը անդրադարձավ Հարթակի առաջին՝ «Կանայք աշխատանքի շուկայում, խնդիրներ և լուծումներ» թեմայով հանդիպման ժամանակ արծարծված խնդիրներին և առաջարկություններին և դրանց առնչությամբ ԱԺ-ում քննարկվելիք օրենսդրական նախաձեռնություններին, որոնք ներկայացնելու համար խոսքը տվեց ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանին: Մասնավորապես, ներկայացվեցին հետևյալ օրենսդրական նախաձեռնությունները.

- <u>Ժամկետային պայմանագրեր, որոնք խոցելի են դարձնում հատկապես կանանց</u>

Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվելու է նույն գործատուի մոտ նույն աշխատողի հետ երկուսից ավելի անգամ պայմանագիր կնքելու դեպքում այն համարել անժամկետ կնքված: Թեև կարգավորումը ուղղված է բոլոր սուբյեկտներին, անկախ սեռից, սակայն այն հնարավորություն է տալիս վերացնելու կանանց պարագայում առկա վտանգը, երբ հերթական ժամկետային պայմանագիրը հղի կամ մայրանալու պատրաստվող կնոջ հետ չի երկարացվում , ինչի պատճառով նա զրկվում է նախա- և հետծննդյան արձակուրդից օգտվելու իրավունքից:

- <u>Տեսչական մարմնի գործառույթների ընդլայնում</u>

Թեպետ իդեալական տարբերակում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պետք է տարանջատվի երկու առանձին կառույցների, ինչը հնարավորություն կտար ունենալ Աշխատանքի տեսչական մարմին, որը լիարժեք կիրականացներ /բարեփոխված/ աշխատանքային օրենսգրքի կատարման վերահսկողությունը, սակայն, այս պահին շահագրգիռ կողմերի շրջանում առկա տարակարծությունների պատճառով նպատակահարմար է գտնվել ներկայիս գործող ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին օժտել վերահսկողական գործառույթով: Նշվեց, որ դատական գործընթացներն անհրաժեշտ են, սակայն երկարատև, ձգձգվող և աշխատող(ներ)ի համար անցանկալի, մինչդեռ աշխատանքային իրավունքների ոտնահարման բազմաթիվ օրինակները հիմք են հանդիսանում պնդելու բուն աշխատանքային իրավունքներով զբաղվող տեսչության ու ուժեղ արհմիությունների գոյության անհրաժեշտությունը:

- <u>Հանրային շահերը պաշտպանելու Actio popularis մոդելի ներդրումը</u>

Ներկայումս արհմիությունների ներկայացուցիչների, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խումբը, որը համակարգում է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը, զբաղվում է Հայաստանում հանրային շահերը պաշտպանելու Actio popularis մոդելի ներդրման շուրջ քննարկումներով: Այդ մոդելը կարող է հնարավորություն տալ արհմիություններին և ՀԿ-ներին օգնելու աշխատողներին, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչներին վերականգնելու ոտնահարված աշխատանքային

իրավունքները՝ զերծ մնալով դատական քաշքշուկներից, իսկ հաճախ նաև գործատուի կողմից հետագա խտրական վերաբերմունքից, և միևույն ժամանակ ստանալով անմիջական աջակցություն դատարանում: Մասնավորապես, քննարկվում են Արհմիությունների մասին օրենքում փոփոխությունները: Աշխատանքային տարբերակով դիտարկվում է անձի շահերի պաշտպանությունը արհմիության անդամի կողմից:

Ավարտուն տարբերակը կներկայացվի հանրային, այդ թվում նաև ՀԿ-ների, քննարկմանը:

- **Աշխատանքային օրենսգրքի խախտման տուգանքների հոսքերի ուղղորդման առաջարկ**

Առաջարկվում է փոփոխություն մտցնել գործատուին տուգանելու արդյունքում գոյացած միջոցների ուղղորդման կարգում, որոնք ներկայումս ուղղվում են պետբյուջե: Ըստ առաջարկի, եթե այդ միջոցների մի զգալի մասը ստանա տուժած աշխատակիցը և այս նորամուծության մասին տեղեկացվի լայն հանրությունը, ապա յուրաքանչյուր աշխատող ավելի եռանդուն հետամուտ կլինի իր իրավունքների պաշտպանությանը: Վերջինս կխթանվեր նաև հաջողված դատական գործերի լուսաբանման արդյունքում:

***

Առաջին օրակարգային հարցի ամփոփման շրջանակում Լենա Նազարյանը հայտնեց, որ ԱԺ-ն ուսումնասիրում է նախորդ հանդիպման ընթացքում քննարկված՝ ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության և մասնակցության խթանմանն առչվող հարցը, և դրա շուրջ զարգացումները և գրանցված արդյունքները կներկայացվեն հաջորդ հանդիպման ժամանակ:

2. **Օրակարգի երկրորդ հարցի շուրջ** քննարկմանը նախորդեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանի հաղորդումը վերջին երկու ամիսներին կանանց խնդիրների բացահայտմանն ուղղված նախարարության մարզային հանդիպումների արդյունքների մասին:

- **Վերարտադրողական առողջության հիմնախնդիրները մարզային հանդիպումների համատեքստում**

Ազատ և ոչ պաշտոնական հարթակներում անցկացված մարզային հանդիպումների ընթացքում 175 կանանց հետ անմիջական շփման արդյունքում բացահայտվել են թե՛ գյուղական համայնքների բուժհաստատությունների պայմանների և հագեցման թերությունները, թե՛ բուժաշխատողների վարքագծային բացերը՝ հիվանդի, մասնավորապես կանանց և աղջիկների, առողջության վերաբերյալ անձնական գաղտնիքի պահպանման տեսակետից, ինչի արդյունքում վերջիններս խուսափում են համապատասխան օգնություն կամ խորհրդատվություն ստանալուց, և մի շարք այլ խնդիրներ, որոնք անմիջապես առնչվում

են վերարտադրողական առողջության հետ: Բացահայտվել է նաև անձնական հիգիենայի մասին երիտասարդ կանանց և աղջիկների, նրանց ծնողների շրջանում տարրական գիտելիքի բացակայությունը, ինչը ոչ միայն առողջապահական, այլ նաև կրթական ոլորտի խնդիր է:

Հարթակի մասնակիցները համաձայնեցին, որ այս խնդիրների լուծումը պահանջում է համակարգված և աստիճանական քայլեր:

Փոխնախարարը հավաստիացրեց, որ կանանց վերարտադրողական առողջության խնդիրները գտնվում են ոչ միայն Առողջապահության նախարարության, այլ նաև իրենց գերատեսչության ուշադրության կենտրոնում: Նրա տեղեկացմամբ, նախատեսում են ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կզբաղվի այդ խնդիրների լուծման հետ կապված օրենսդրական, կազմակերպչական, ենթակառուցվածքային, առողջապահական, կրթական, մշակութային և այլ հարցերով: Քաղաքացիական հասարակության առաջարկությունները այդ աշխատանքային խմբին հասանելի կլինեն ԱԺ-ՔՀԿ հարթակի, ինչպես նաև նախարարություններին կից խորհուրդներում ձևավորված հարթակների միջոցով:

- **ՔՀԿ –ների առաջարկությունները վերարտադրողական առողջության ոլորտում**

Մասնակիցները քննարկեցին խնդրով զբաղվող ՔՀԿ-ների մատնանշած խնդիրները և դրանց շուրջ հնարավոր լուծումները, որոնց թվում.

- երեխայի խնամքի վճարովի արձակուրդի տրամադրումը տղամարդկանց,
- մինչև 12 շաբաթական հղիությունների ընդհատման համար օրենքով սահմանված սպասման 3 օրերի պարտադրանքի աննպատակահարմարության հարցը,
- դպրոցներում սեռական դաստիարակության ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը և այդ թեմաների դասավանդումը ֆիզկուլտուրայի կամ ռազմական գործի ուսուցիչների կողմից իրականացնելու անթույլատրելիությունը,
- ընտանիքում սեռական բռնությանն առնչվող խնդիրների լուծումների անհրաժեշտությունը,
- միասեռական կանանց՝ առողջապահական համակարգի ծառայություններից օգտվելու խոչընդոտների հաղթահարման հնարավորությունները:

Որոշվեց.

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի առաջարկով, հաջորդ աշխատանքային հանդիպմանը հրավիրել Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանին, վերարտադրողական առողջության հիմնախնդիրների շուրջ ոլորտային և առավել առարկայական քննարկում ծավալելու նպատակով:

Հ.Գ. Նախնական որոշվել է. հաջորդ հանդիպման քննարկման թեմա դարձնել ընտանեկան բռնության հարցերը և անդրադառնալ վերարտադրողական առողջության շուրջ առաջարկություններին:

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպումը տեղի ունեցավ «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և ՕքսԵՋԵՆ հիմնադրամի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ՝ Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ:

3. «ՀԱՎԱՍԱՐ»-ի մրցանակաբաշխություն

Ազգային ժողով-ՔՀԿ համագործակցության հարթակի ձևավորման գաղափարը ծագել և իրականություն է դարձել ՕքսԵՋԵՆ հիմնադրամի կողմից իրականացվող ՀԱՎԱՍԱՐ քարոզարշավի շրջանակներում: Հարթակի հերթական հանդիպման ավարտին տեղի ունեցավ լավագույն համագործակցությունը խրախուսելու նպատակով կազմակերպված «ՀԱՎԱՍԱՐ»-ի ամենամյա մրցանակաբաշխությունը:

ՀԱՎԱՍԱՐ քարոզարշավի առաջամարտիկների խորհրդանշական մրցանակներին արժանացան ՀՀ Ազգային Ժողովի 7-րդ գումարման կազմում ներկայացված 3 խմբակցությունների 7 պատգամավորներ՝ Լենա Նազարյանը, Աննա Կոստանյանը, Արսեն Ջուլֆալակյանը, Գայանե Աբրահամյանը, Շաքե Իսայանը, Հերիքնազ Տիգրանյանը:

- «Տարիներ շարունակ **ՀԱՎԱՍԱՐ** քարոզարշավն ու ՕքսԵՋԵՆի բազմաթիվ ծրագրերը հիանալի հնարավորություններ են ստեղծել և մեծ ներդրում ունեցել կանանց և աղջիկների զորեղացման, հանրային դիսկուրսում հավասարության եզրույթը տարածելու և ընկալումները փոխելու դժվարին գործում, որի համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում բոլորին», *Գայանե Աբրահամյանի գրառումից, «Իմ քայլը» խմբակցություն:*

- «Քաղաքական ասպարեզում կանանց օրակարգն առաջ տանելը մեծ ջանք է պահանջում: Մինչև այժմ դա եղել է արդյունավետ, պատրաստվում եմ շարունակել այդ աշխատանքը», *Աննա Կոստանյան, «Լուսավոր Հայաստան» խմբակցություն:*

- «Շատ անելիքներ ունենք կանանց աշխատանքային իրավունքների ամրապնդման, վերարտադրողական առողջության և առհասարակ աշխատանքային օրենսգրքի բարելավման ուղղությամբ: Հուսով եմ, որ կշարունակենք այս համագործակցությունը», *Շաքե Իսայան, ԲՀԿ խմբակցություն:*

- «ՕքսԵՋենի հետ համագործակցությունը նոր մտածելակերպ է ձևավորել իմ մեջ, և այժմ ես համաձայն եմ, որ մենք պետք է պոզիտիվ խտրականության միջոցով հասնենք հավասարության: Սակայն հուսով եմ, որ ապագայում մենք կունենանք հասարակություն, ուր կլինի կանանց և տղամարդկանց հավասարություն և այլևս կարիք չի լինի այդ պոզիտիվ խտրականության: Սա պարտավորություն եմ համարում», *Հերիքնազ Տիգրանյան, «Իմ քայլը» խմբակցություն:*

Ակտիվ և արդյունավետ համագործակցության համար մրցանակներ ստացան ՕքսԵՋենի գործընկերները. ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ն, Ընտանիքի Ակադեմիա ՀԿ-ն և ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը:

Ինչպես նշեց ՕքսԵՋեն հիմնադրամի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը, առանց Շվեդիայի

թագավորության ուշադրության և հետևողական ֆինանսական աջակցության ՀԱՎԱՍԱՐ քարոզարշավն այսքան թափ չէր հավաքի և հաջողությունների չէր հասնի: Ի նշան երախտագիտության, ՀԱՎԱՍԱՐ-ի խորհրդանշական մրցանակը ստացավ նաև Երևանում Շվեդիայի դեսպանությունը:

«ՀԱՎԱՍԱՐ»-ի մրցանակաբաշխություն միջոցառումն իրականացավ՝ «Հավասար. խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից Շվեդիրայի կարառվարության ֆինանսական աջակցությամբ: Քարոզարշավի գործընկերներն են «ՊրոՄեդիա_Գենդեր» ՀԿ-ն: